



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ ՆՈՐ ՁԵԼԱՆՏԱՅԻ
DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔ. ՆԱՃԱՐԵԱՆ
Առաջնորդ

ARCHBISHOP HAIGAZOUN NAJARIAN
Primate

30 Մարտ 2020

Միբելի Հայ հաւատացեալ ժողովուրդ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի

“Աշխարհի վրայ պիտի տառապիք, բայց քաջալերուեցէք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին”
(Յովհաննէս 16:33)

Այսօր, ողջ աշխարհը կը տառապի պսակաւոր ժահրին հետեւանքներով: Հազարաւոր մարդիկ կը մահանան իսկ հարիւր հազարներ վարակուած այս ախտէն՝ կը չարչարուին աշխարհի չորս ծագերուն: Հայ ժողովուրդն ալ զերծ չէ այս ախտէն: Յարդ մահեր ունինք Հայաստանի, Պարսկաստանի, ԱՄՆ-ի, Անգլիոյ, Ֆրանսայի եւ Լիբանանի մէջ: Կը յուսանք որ Հայաստանի եւ բոլոր երկիրներուն մէջ պետութիւնները պիտի կարողանան վերահսկել կացութիւնը եւ ամէն մէկ գիտակից քաղաքացի լրջութեամբ պիտի հետեւի իշխանութեանց հրահանգներուն :

Պատամական եւ դժուարին օրեր կ'անցընենք Զատկուան այս շրջանին: Երեւի Հայ ժողովուրդը Եղեռնէն ետք այսպիսի վիճակի մէջ չէր գտնուած զրկուելով Եկեղեցւոյ Սուրբ Պատարագէն եւ Սուրբ Հաղորդութենէն: Սակայն, օգտուելով ժամանակակից հնարաւորութիւններէն, մեր արարողութիւնները հաւատքով եւ նուիրումով կը կատարուին մեր եկեղեցականներուն կողմէ եւ կը սփռուին ուղղակի կերպով որպէսզի ձեր տուններէն կարենաք հետեւիլ հոգեպարար արարողութիւններուն: Կը յուսամ որ ողորմածն Աստուած, զթալով մեզի, կ'ազատէ մեզ այս ժահրի ժանիքներէն եւ անոր ստեղծած մարմնական եւ հոգեկան դժուարութիւններէն:

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութեան Տօնին առթիւ, ի դիմաց մեր Թեմական Խորհուրդին եւ եկեղեցականներուն, կը շնորհաւորեմ Ձեր Սուրբ Զատիկը, մաղթելով Ձեզի առողջ եւ արդիւնաշատ տարիներ: Որպէս ընտանիք այս առիթը օգտագործեցէք սիրով եւ համբերութեամբ, միասնաբար կրեցէք ձեր դժուարութիւնները, գիտնալով որ այս ժամանակաւոր փորձութիւն մըն է: Կ'աղօթեմ որ Աստուած հեռու պահէ ձեզ բոլորդ ամէն տեսակի որոգայթներէ միջեւ որ կրկին հաւաքուինք մեր սուրբ եկեղեցիներուն մէջ, հաղորդուելով միասնաբար եւ փառաւորենք, մա'հը յաղթող, յո'յս ներշնչող, մեր Յարուցեալ Տէրը:

Այս կացութեան մէջ ո՛րքան ճիշտ են եւ դիպուկ Պօղոս Առաքեալի այս խօսքերը՝ *«Ճնշուած ենք ամէն կողմէ, բայց ոչ ընկճուած. գիտենք միշտ յուսալ եւ երբեք չյուսահատիլ: Հալածուած ենք, բայց ոչ լքուած, չարչարուած՝ բայց ոչ մեռած: Ամէն ժամ կը կրենք մեր մարմիններուն մէջ Յիսուսի մահուան չարչարանքները, որպէսզի Յիսուսի կեանքն ալ յայտնուի մեր մարմիններուն մէջ»* - Բ Կորնթ. 4:8-11

Քրիստոս Յարաւել ի Մեռելոց, Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի

Աղօթարար՝

Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան
Առաջնորդ